

---

## ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՆՄԱՆԱԿԻ ԿԵՐՊԱՐԸ ԷՂԳԱՐ ՊՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԱԼՍՏՅԱՆ Ա. Ր.

Մարդու նմանակի կերպարը չարի և բարու արքետիպերն արտացոլող դուալիստական միֆերին բնորոշ առասպելաբանական ֆենոմեն է, որ առաջին անգամ գիտակցվում և գեղագիտական-փիլիսոփայական իմաստավորում է ստանում ռոմանտիզմի գրականության մեջ: Նմանակը ռոմանտիզմի գրականության մեջ մարդու մութ էության արտաքին դրսևորումն է, երկրորդ ես-ը, անգիտակցականը, որի խորքում թաքնվում են մարդկային հոգու գաղտնի ցանկություններն ու մղումները: Հոգեբան Կ. Յունգը այս արքետիպն անվանում է ստվեր: «Ստվերը, - գրում է նա, - անձնավորում է այն ամենը, ինչ սուբյեկտը մերժում է ինքն իր մեջ, բայց որն ի վերջո բարձրանում է վեր՝ դեպի գիտակցություն, ինչպես, օրինակ, խառնվածքի խոցելի գծերը կամ մերժելի մղումները»<sup>1</sup>: Այս տեսանկյունից հետաքրքիր է, որ բազմաթիվ հեղինակների մոտ նմանակը ստվեր չի ունենում:

Խորհրդավոր նմանակների մասին գեղարվեստական ստեղծագործություններ («doppelgänger stories»<sup>2</sup>) են գրվել թե՛ անգլիական՝ Ս. Քոլրիջ («Քրիստաբել» պոեմը, որը համարվում է թեմայի առաջին անդրադարձը), Ռ. Ստիվենսոն («Բալանտրե ամրոցը» վեպը, «Դոքթոր Ջեքիլի և պարոն Հայդի արտասովոր պատմությունը» վիպակը, որը նմանակի թեմային առաջին անգամ գիտական մեկնություն է տալիս), թե՛ գերմանական՝ Է. Հոֆման («Մատանայի էլեքսիրը», «Ավագե մարդը», «Նմանակը»), թե՛ ռուսական՝ Ա. Պոգորելսկի («Նմանակը», կրում էր Հոֆմանի ստեղծագործությունների զգալի ազդեցությունը), Ֆ. Դոստոևսկի («Նմանակը», որ նույնպես կրում էր ռոմանտիզմի գրականության նկատելի ազդեցությունը) և թե՛ ամերիկյան ռոմանտիզմի գրականության մեջ՝ Վ. Իրվինգ և Է. Պո: Նրանց բոլորի երկերում էլ նմանակը անձի մութ, ստվերոտ կողմի, ծածուկ էության արտաքին երևակումն է, անձի երկատումը:

Էդգար Պոյի նմանակի թեման արծարծող «Վիլյամ Վիլսոն» նովելը և Հոֆմանի՝ նույն թեմայով գրված ստեղծագործությունները (նաև հեղինակները) համեմատության բազմաթիվ եզրեր ունեն: Նշենք, որ նմանակի կերպարը Հոֆմանի արձակում, առավել քան որևէ այլ գրողի ստեղծագործության մեջ, պարզապես առանձին

---

<sup>1</sup> Густав Юнг К. Бог и бессознательное, М., с. 480.

<sup>2</sup> Խ՝ö The best horror short stories 1800-1849: A classic horror anthology, edited and introduced by Andrew Barger, Bottletree Books LLC, 2010, p. 9.

գիտական ծավալուն ուսումնասիրության նյութ է, ինչպես գրում է գրականագետ Ա. Կարելյսկին. «Հոֆմանին ուղղակի հետապնդում էր նմանակի կերպարը»<sup>3</sup>: Գերմանական ռոմանտիզմի խոշորագույն ներկայացուցիչ Է. Հոֆմանը թեմայի ուշագրավ լուծումներ է գտել հատկապես «Մատանայի էլեքսիրը» վեպում, «Ավագե մարդը» պատմվածքում և «Նմանակը» վիպակում: «Նմանակում» Շվեյցարիայից Գերմանիայի անձանոթ քաղաք Ժամանած երիտասարդը՝ Դեոդատուսը, հայտնվում է արտասովոր մի պանդոկում, որտեղ շատերը նրան դիմավորում են իբրև նկարիչ Գեորգ Գաբերլանդ: Պարզ է, որ Գաբերլանդը Դեոդատուսի նմանակն է, և այն վտանգավոր, անբացատրելի ու սահմակեցուցիչ արկածները, որ ունենում է վերջինս՝ ընդհուպ մինչև մահացու վիրավորվելը, պետք է կատարվեին հենց Գաբերլանդի հետ: Ի տարբերություն Է. Պոյի «Վիլյամ Վիլսոնի», որի հերոսն իր նմանակին հանդիպում է նովելի հենց սկզբում՝ դպրոցական հասակում և թշնամանում նրա հետ, Հոֆմանը չի զարգացնում իր հակառակորդ նմանակների աստելության այդ գիծը: Եթե Պոյի նովելում նմանակը պահապան հրեշտակի հակոտնյան է, ապա Հոֆմանի վիպակում նմանակը Գաբերլանդի պահապան հրեշտակն է: Գաբերլանդի և Դեոդատուսի հանդիպումը ճակատագրի իրագործման տեսանկյունից պարզապես անհրաժեշտություն է: Նրանք առաջին անգամ հանդիպում են Գաբերլանդի սիրած աղջկա՝ Նատալիի մոտ, որին Դեոդատուսը իր երազներում է տեսել միայն, բայց նրանց թաքուն աստելությունն ու մրցակցությունը թշնամանք չեն դառնում և ճակատագրական հանգուցալուծում չեն ստանում, ինչպես Պոյի նովելում: Նմանակների մասին շատ ստեղծագործություններ, այդ թվում և «Վիլյամ Վիլսոնը», ավարտվում են նմանակներից մեկի մահով, նմանատիպ ստեղծագործություններում նմանակի հայտնվելն արդեն անխուսափելի, ճակատագրական էլք է նախանշում: Հոֆմանի վիպակում Նատալին ամուսնանում է Դեոդատուսի հետ, իսկ նկարիչ Գաբերլանդի համար մնում է որպես իդեալ և ստեղծագործական ներշնչանքի աղբյուր:

Հոֆմանի հերոսները կուրորեն ենթարկվում են ճակատագրի մթին ուժերին, նրանք խամաճիկներ են այդ ուժերի ձեռքերում, մինչդեռ Պոյի հերոսներին բնորոշ է ագրեսիան, նրանք մշտապես փորձում են գործել՝ ելնելով ներքին և չար մղումներից, վնաս պատճառել, լուծել իրենց վրեժն ու անպատվությունը, սպանել և ոչնչացնել այն, ինչը՝ որպես սևեռում, հետապնդում է իրենց, լռեցնելու, ճնշելու իրենց խղճի ձայնը: Պոյի հերոսը՝ Վիլյամ Վիլսոնը, հեղինակի ներքին ձայնն է, որին նմանակը նովելի վերջում սրախողիտող է անում: Որքան էլ Պոյի և Հոֆմանի արձակը պատկերային բազմաթիվ նմանություններ ունենան, այնուամենայնիվ, Պոյի արձակը Հոֆմանի արձակից տարբերվում է ֆանտաստիկի ընկալման առանձնահատկությամբ և

<sup>3</sup> Карельский А. В. Эрнст Теодор Амадей Гофман (Собр. соч., т. 1, М., 1991, с. 5-26).

մատուցման կերպով: Համեմատելով Հոֆմանի և Պոյի արձակը՝ Դոստոևսկին գրում է. «Էդգար Պոն թույլ է տալիս անբնական իրադարձության հավանականությունը՝ ապացուցելով դրա հնարավորությունը, ըստ որում, շատ հաճախ նա այդ անում է խորամանկ հնարքներ գործադրելով, և կյանքի կոչելով այդ անբնական իրադարձությունը, մնացած ամեն ինչում Պոն հավատարիմ է մնում իրականությանը: Այդպիսին չէ ֆան-տաստիկի բնույթը Հոֆմանի ստեղծագործություններում: Նա բնության ուժերը մարմնավորում է պատկերների մեջ՝ իր պատմվածքներ է բերում կախարդուհիների, ոգիների և իր իդեալը փնտրում է ոչ երկրային երևույթների մեջ, անսովոր մի իրականության մեջ, որն ընդունում է որպես վերին իրականություն, ասես ինքն էլ հավատում է այդ կախարդական աշխարհի գոյությանը»<sup>4</sup>: Դոստոևսկին Պոյին համարում է «ոչ այնքան ֆանտաստ, որքան քմահաճ գրող»՝ ցույց տալով նրա քմահաճությունների համարձակությունը: Պոն, ասում է Դոստոևսկին, - «հիմնականում վերցնում է ամենաբացառիկ իրականությունը, դնում է իր հերոսին արտաքին, կամ հոգեբանական բացառիկ իրադրության մեջ, և թափանցումի զարմանալի ուժով, ապշեցնող հավաստիությամբ պատմում տվյալ մարդու հոգեվիճակի մասին: Եվ բացի այդ, Էդգարն ունի մի գիծ, որ նրան տարբերում է մյուս գրողներից. դա երևակայության ուժն է: Խոսքն այն մասին չէ, թե Պոն երևակայությամբ գերազանցում է մյուսներին, այլ այն մասին, որ նրա երևակայության մեջ կա մի առանձնահատկություն, որ մենք չենք հանդիպել ոչ մի ուրիշ գրողի մոտ. դա մանրամասների ուժն է»<sup>5</sup>:

Կարելի է նշել նաև Հոֆմանի և Պոյի արձակի բազմաթիվ այլ նմանություններ ու տարբերություններ, ինչպես Հոֆմանի գրոտեսկը և հումորը, որ հատուկ չեն Պոյին: Հումորի լույսը երբեք չի թափանցում Պոյի գրականության մռայլ աշխարհները, բացի այդ, Հոֆմանի ստեղծագործությունները հաճախ հեքիաթներին բնորոշ «երջանիկ» ավարտ են ստանում, իսկ Պոյի ստեղծագործություններն ավարտվում են քայքայմամբ, անկումով, մահով:

Իր լավագույն ստեղծագործություններից մեկը Պոն համարում էր «Վիլյամ Վիլսոն» նովելը, որի մտահղացումը նա փոխ է առել «Նիրհաժ հովտի լեզենդը» անգլագական վիպակի հեղինակ Վ. Իրվինգից. այդ մասին նույնիսկ հիշատակվում է նրանց նամակագրության մեջ: Իրվինգի պատմվածքում հերոսը սրախողխող է անում իր թշնամուն և հանելով նրա դիմակը՝ տեսնում է իր դեմքը<sup>6</sup>: Այլ է լուծումը Էդգար

<sup>4</sup> Время, 1861, т. I, N 1, с. 230-231: S է՛ւ նաև [https://ru.wikisource.org/wiki/ Три рассказа Эдгара По \(Достоевский\)](https://ru.wikisource.org/wiki/Три_рассказа_Эдгара_По_(Достоевский)).

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Silverman K. Edgar A. Poe: Mournful and Never-ending Remembrance, New York, Harper Perennial, 1991, pp. 149-150.

Պոյի նովելում: Իրվինգը, որ Պոյի նման նույնպես տուրք էր տալիս սարսափի ժանրին, սարսափի ազդեցությունը թողնում է պատմվածքի վերջում: Ֆանտաստիկը այստեղ բացահայտվում է թռիչքաձև, անակնկալ կերպով, Պոն ֆանտաստիկը զարգացնում է աստիճանաբար, և դա նույնպես Պոյի ֆանտաստիկայի առանձնահատկություններից է: Նախ, առաջին դեմքով իր մասին խոսող հերոսը մեզ պատմում է համադասարան-ցի անվանակցի մասին, ապա աստիճանաբար պարզվում է, որ անվանակիցը և ինքը նույն տարին և նույն օրն են ծնվել, այնուհետև խոսում է իրենց դիմագծերի նմանության մասին, ապա տեսնում ենք նաև հերոսի վարքի նմանակման երևույթը. «Վիլսոնի վարքը իսկ և իսկ իմի նմանակումն էր և՛ խոսքում, և՛ գործում, և նա իր դերը հիանալի էր կատարում: Նրա համար դժվարություն չէր եղել հագուստս ընդօրինակելը, քայլվածքս ու շարժումս՝ նույնպես, և, չնայած նրա օրգանական արատին, նույնիսկ ձայնս էր նմանակել, ճիշտ է, բարձր ձայնով խոսել չէր կարող, բայց հնչերանգը նույնն էր, իսկ նրա յուրօրինակ շշուկը իմ արձագանքն էր կարծես»<sup>7</sup>:

Վիլսոնների նմանության մանրամասները պարզապես սահմոկեցուցիչ են: Շշուկով խոսելու այս խորհուրդը միայն նովելի վերջում է բացահայտվում: Պարզ է արդեն, որ Վիլսոնը դառնում է իր հերոսի ժխտումը՝ նմանակման մեջ ստիպելով ճանաչել ինքն իրեն՝ ինքնաճանաչողության յուրօրինակ մարտահրավեր դառնալով նմանակի համար: Նովելի ամենասահմոկեցուցիչ դրվագը Վիլսոնի հանդիպումն է իր քնած նմանակի հետ (Հոֆմանի ստեղծագործություններում նմանակների հանդիպումը մշտապես տեղի է ունենում մթության մեջ). երբ անգոր է գտնվում իրագործել իր չար մտադրությունը, սարսափահար փախուստի է դիմում, թեև նրան այդպես էլ չի հաջողվում փախչել նմանակի հետապնդումներից կամ ինքն իրենից: Թղթախաղի ժամանակ չգիտես որտեղից հայտնված նմանակը մասնակիցների առջև մերկացնում է բոլորին սնանկացրած Վիլսոնի խարդավանքը: Նմանակը փորձում է կանխել նրա սրիկայությունները, անվանակցին ցույց տալ իրական դեմքը՝ ստանձնելով խղճի դերը: Պատահական չէ, որ Վիլսոնը վերջին անգամ նրան քնած է տեսնում և հենց քնած ժամանակ փախչում իր նմանակից. անկասկած, Պոն ակնարկում է քնած խիղճը:

Նմանակի կողմից ինքնաճանաչողության մարտահրավերն ավարտվում է Վիլսոնի մենամարտով, որ երկար չի տևում. Վիլսոնը մի քանի անգամ խոցում է հակառակորդ նմանակի կուրծքը, բայց նրա դիմաց այլևս ոչ թե նմանակն է, այլ «մի հսկայական հայելի», հայելու մեջ սեփական արտացոլանքը՝ արյունոտ ու գունատ դեմքով, հայելու առջև՝ դիմակն ու թիկնոցը, հնարք, որ, անշուշտ, Պոյի ստեղ-

<sup>7</sup> XIX դարի ամերիկյան պատմվածք, Ե., 1989, էջ 84:

ծագործությունից ազդվելով, օգտագործել է Օսկար Ուայլդը իր նշանավոր «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում:

Պոն մեծ նորարար է: Նրա գլխավոր նորարարությունը դրսևորվում է հոգեբանական խառնվածքների մշակման մեջ, որն առ այսօր արդիական է:

## ОБРАЗ ТАИНСТВЕННОГО ДВОЙНИКА В ТВОРЧЕСТВЕ ЭДГАРА ПО

ГАЛСТЯН А. Р.

Резюме

Тема таинственного двойника присутствует в английской, немецкой, русской и американской художественной литературе романтизма. Сравнительное исследование данной темы в произведениях Эдгара По выявляет ряд особенностей в раскрытии этого образа.

Если герои Гофмана (повесть «Эликсир сатаны», рассказ «Песчаный человек» и повесть «Пародист») слепо подчиняются темным силам судьбы, являясь марионетками в руках этих сил, то для героев Э. По характерна агрессия, обуславливающая их поступки. Присущие Гофману гротеск и юмор не характерны для творчества Эдгара По.

Помимо сказанного произведения Гофмана имеют характерный для сказок «счастливый» конец, а произведения Э. По пронизаны мотивами смерти и мистики.

## THE IMAGE OF MYSTERIOUS COUNTERPART IN THE WORKS OF EDGAR POE

A. GALSTYAN

Abstract

The theme of the mysterious counterpart is present in English, German, Russian and American literary Romanticism. The comparative study of the given subject in the works of Edgar Poe reveals a number of features in the disclosure of this image.

If the heroes of Hoffmann (the novel «Elixir of *Satan*», «Sand man» and the novel «Parodist») blindly obey the dark forces of the fate, being marionettes in the hands of these forces, then the heroes of E. Poe are characterized by aggression that stipulates their actions. Grotesque and humor that are inherent to Hoffmann are not typical for the works of Edgar Poe.

In addition to the above said the works of Hoffmann has got “happy end” which is typical to the fairy-tales, and the works of E. Poe are permeated with the motives of death and mysticism.